

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Մի պահ հոգեհանգստյան արարողությունից

Վրաստանյաց թեմի եկեղեցական խորհրդի և առաջնորդ Տ. Գեորգ եպիսկոպոս Սերեբդարյանի ջանքերով վերջին տարիներս Թբիլիսիի նախկին վանքի Մայր տաճարի բակից, ներկայիս առաջնորդանիստ կաթողիկե Ս. Աստվածածին—Մեղդանի Ս. Գեորգ եկեղեցու բակ տեղափոխվեցին հանգուցյալ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազյանի (1812—1880), Խորեն եպիսկոպոս Ստեփանեի (1840—1900), հայտնի հայ հասա-

Փոխադրված աճյունների վրա դրված նոր տապանաքարը

րական գործիչներ՝ «Մեղու Հայաստանի»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանի (1830—1911) և «Փորձ»-ի ու «Արձագանք»-ի խմբագիր Աբգար Հովհաննիսյանի (1849—1904) աճյունները և ամփոփվեցին հիշյալ եկեղեցու հյուսիսային պատի տակ: Փոխադրված աճյունների վրա դրվեց սև մարմարե տապանաքար՝ համապատասխան գրությամբ:

Գերեզմանը ցանկապատվեց նաև երկաթե ճաղերով:

1981 թվականի հուլիսի 12-ին, կիրակի օրը, ս. պատարագից հետո, Տ. Գևորգ եպս. Սերայդարյանի գլխավորությամբ, Տ. Տաթև Հարությունյան և օրվա պատարագիչ Տ. Դավիթ Զելվեյան քահանա հայրերի մասնակցությամբ ու խուռն հավատացյալների ներկայությամբ տեղի ունեցավ հանդիսավոր հոգեհանգիստ՝ Ս. Գևորգ եկեղեցու բակում հանգչող հայ հոգևորական և աշխարհական կարկառուն դեմքերի հիշատակին: Հոգեհանգստյան հանդիսավոր արարողությունից հետո հուզիչ դամբանական ճառով հանդես եկավ վրահայոց թեմի եկեղեցական խորհրդի նախկին նախագահ, հայտնի գրող Սուրեն Ավչյանը:

Տեքստը և լուսանկարները
ՍԱՐԳԻՍ ԴԱՐՁԻՆՅԱՆԻ